«Հաստատում եմ»
Վայոց Ձորի մարզի
Եղեգնաձորի պետ. ռեգիստր
_____ Ա.Գրիգորյան
«24» 02 2003թ.

գրանցման թիվ 65.210.00442
գրանցման 034.059437

«Հաստատում եմ»
Վայոց Ձորի մարզպետ
_____ Վ.Մաթևոսյան
«____» _____ 2003թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց Ձորի մարզի
«Եղեգնաձորի երաժշտական դպրոց»
պետական ոչ առևտրային
կազմակերպություն:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ Վայոց Ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, երաժշտական կրթություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

1.2 Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3 Հաստատությունը գտնվում է Վայոց Ձորի մարզի ք.Եղեգնաձոր Շահումյան 9

1.4 Հաստատությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8 Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Դպրոցի գործունեության առարկան և նպատակը երաժշտական կրթական, մշակութային համերգային հրատարակչական բնույթի գործունեության իրականացումն է:

2.2 Երաժշտական կրթական և մշակութային գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ / նախասիրական, նախամասնագիտական/ կրթության պահանջմունքների բավարարման համար:

2.3 Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ- հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

3.11 Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է, բացառիկ դեպքերում այն կարող է փոփոխվել խորհրդի կողմից:

3.12 Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և իր դասացուցակի հիման վրա:

3.13 Հաստատության ուսումնական պլաններում առանձին առարկաներին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական տիպային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

Տարեկան գերազանց առաջադիմության և լավ վարք, ինչպես նաև առանձին ուսումնական առարկաներից գերազանց առաջադիմություն ունեցող սովորողները նախարարության սահմանված կարգով պարգևատրվում են գովասանագրերով:

4. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով: Հաստատությունում, ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրով նախատեսված կառավարման և ֆինանսավորման նոր կարգի անցման ժամանակացույցը հաստատելու մասին: N 444 որոշմամբ հաստատված ժամանակացույցի, իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:

4.2 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ:

4.3 Համայնքի, ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում, որպես խորհրդատվական մարմին, ձևավորվում է ծնողական խորհուրդ, կարող են ձևավորվել նաև հոգաբարձուների և այլ խորհուրդների:

4.4 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեության և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.5 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ հաստատության հիմնադրումը.

բ/ հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ/ հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ/ հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե/ հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

զ/ հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,

է/ հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.6 Լիազորված պետական մարմինն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

ժ/ վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժա/ ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժբ/ աջակցում է հաստատության մանկավարժական, հոգաբարձուների և ծնողական խորհուրդների աշխատանքներին.

ժգ/ կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք, հաստատության խորհրդի առաջարկությամբ, ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը.

ժդ/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

4.10 Տնօրենի բացակայության դեպքում, նրան նշանակած մարմնի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

4.11 Հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝

ա/ պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի համար.

բ/ վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությանը .

գ/ հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ.

դ/ ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքը, ընդհանրացնում և տարածում լավագույն ուսուցիչների աշխատանքի դրական փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:

4.12 Հաստատության տնօրենի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝

ա/ կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը.

բ/ ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը .

գ/ կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:

4.13 Հաստատության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

ա/ պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական արդյունքներին դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ/ միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար.

4.14 Դասարանի ղեկավարը :

ա/ դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում ներտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ.

5.11 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի / վերստուգման/ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ, ՍՈՎՈՐՈՂԸ ԵՎ ԾՆՈՂԸ

6.1 Հաստատությունում մանկավարժական աշխատանքի կարող է ընդունվել մանկավարժի որակավորում ունեցող մասնագետը, բացառիկ դեպքերում՝ ոչ մանկավարժական կրթություն ունեցող անձը, որի՝ հաստատությունում աշխատելու կարգը և պայմանները սահմանում է նախարարությունը:

6.2 Հաստատության մանկավարժը իրավունք ունի մասնակցելու հաստատության կառավարմանը: Հաստատության մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

6.3 Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

6.4 Հաստատության մանկավարժական աշխատողները կարող են ընտրել և կիրառել նախարարության երաշխավորած ուսուցման, ուսումնական նյութերից և ձեռնարկներից որևէ մեկը կամ մի քանիսը:

6.5 Սովորողն իրավունք ունի՝

ա/ անվճար ստանալու քառամյա, յոթնամյա և միջնակարգ երաժշտական կրթություն.

բ/ անկախ բնակության վայրից՝ սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման ձևը.

գ/ անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.

դ/ հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.

ե/ ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները.

զ/ առանց հիմանական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների / որդեգրողների կամ հոգաբարձուի/ համաձայնությամբ, թողնելու ուսումը:

6.6 Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:

6.7 Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

6.8 Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքները ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

6.9 Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանված կարգով կարող է հեռացվել հաստատությունից:

6.10 Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերը ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

7. ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: